Ա. Ո. Ա. Կ

ԶԻ ԵՒ ԷՇ

Աշխարհիս մէջը պէտք է մենք
Միմեանց միւսին հասնինք՝ օգնենք.
Եթէ այսօր ոտքն սահեցաւ դըրացդդ,
Վաղը կարնայ նոյն բանը զալ քու գլխդդ.
Ձեռք տուր, հասիր շոյտ մըռնա դում,
Որ՝ այլք օգնեն քեզ պէտք ժամուն:

Ձին և Իշուկն ի միասին
Գեղէն քաղաք կ'երթային.
Տանը բեռն կար իշուն շալակ,
Իսկ ձին անբեռն՝ ազատ, արձակ
Առաջ կ'երթար խաղալով.
Էշն՝ կը տըքար կաղալով:
Սա՝ դառնալով ղէպ ի ձին
« Խրնձա, ասաց, իմ անձին,
» Ուժըս հատու, կը մեռնիմ:
» Այլ ես տոկալ կարող չեմ,
» Թէ իմ բեռին վրայէն,
» Գոնէ, գոնէ կէս ի կէս
» Դու շալակէս չըվերցնես... »
Իսկ անհոգ ձին այս խօսքերուն
Չի դրաւ բընաւ ուշադրութիւն:
Էշն՝ քանի մ'քայլ առաջ զընաց
Ապա ինկաւ ճարը հատած:
Իշավարին հարկ եղաւ որ՝
Իշուն համատոմ, բեռներն բոլոր
Տեղաւորէ ձիոյն կըռնակ:
Հակըցաւ ձին անկրընդմտանք
Պատ վարմունքին հետևանքն,
Այլ անցած էր ժամանակն.
Ցակամայ կամն ըստիպուած,
Իշուն կաշին ևս շալկած.
Հասաւ քաղաք, սիրտը մեղ.
Յետոյ նորէն դէպ ի գեղ
Դարձաւ՝ նորոնոր բեռներ շալկած
Ցըքաղքալով՝ յոգնած դաղրած:

ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ

(Տես յէջ 455)

Հայց մինչդեռ Կոմնենեանք քաջութեամբ կը պաշտպանէին կայսրութիւնը, որ ամեն կողմէն կը քայքայէր, անհոգ Մի-քայէլ, իւր ներքինիներովն չրջապատեալ, սրբազան նիւթոց վրայ մեծավերջոտանաւորներ շարադրելու զբաղած էր։ Նիկեփոր Բրիէնի զարհուրելի ապստամբութեան դէմ, դարձեալ Ալէքսիս եղաւ, որ այդ առթիւ ամենազգնուական և Արևմտեան բանակաց մեծ ծառայ անուանեցաւ, կայսեր եղբօրը Կոստանդինի հետ, Կոստանդնուպոլսոյ պաշտպանութեան գլուխ կեցաւ։ Ռուսսէլը բանտէն հանեցին, և երեքն ի միասին, շուտով իրենց վարձկան մարդիկն՝ և ով որ ձեռքերնին ինկաւ՝ զինելով, ետ մղեցին իրենց թշնամիներն յարձակմունքն, որոնք զինուորներն էին անպատրաստից զօրքեր, Նորմանտացի վարեկներ[1]

1. Նորուեգիացի Ժողովուրդ մ'էր որ Եւրոպոյ արևմտեան և արևելեան կողմերն տարածուեցան։ Ասոնցմէ էր Ռուրիք հիմնագիր Ռուսիոյ կայսրութեան։

digitised by A.R.A.R.@